ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 11.07.2017թ.

Ո Ր Ո Շ Ում
ԳԲԽ-ԱՄ-2017/16 բողոքը քննող խորհրդի անդամի

ԳԲԽ-ԱՄ-2017/16 բողոքը քննող խորհրդի անդամը, գործելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Ա և Ա Քոնստրաքշն» ՍՊԸ-ի 2017 թվականի հուլիսի 7-ի բողոքով ներկայացված միջնորդությունը և ղեկավարվելով 2010 թվականի դեկտեմբերի 22-ի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի և 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ա և Ա Քոնստրաքշն» ՍՊԸ-ի 07.07.2017թ. բողոքով ներկայացված՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար «Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջան սահմանի միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 36+200-կմ 64+174, 28կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքներ»-ի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ» ծածկագրով պայմանագրի կնքման գործընթացը կասեցնելու մասին միջնորդությունը բավարարել՝ բողոքի առարկա հանդիսացող չափաբաժնի մասով:

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ